ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

05 մայիսի 2015 թվականի N 138-Ն

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐԿՐՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ՑԱՆՑԵՐ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկների հիմքում դրվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման գործընթացը կանոնակարգելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենին՝ ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգով սահմանված գործընթացի իրականացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների
նախարարի 2015 թվականի մայիսի
«05» -ի N 138-Ն հրամանի

ԿԱՐԳ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐԿՐՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ

Հիմնական հասկացություններ

1. Սույն կարգի իմաստով օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները .

հանձնաժողով՝	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
արտադրող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձ.
հաղորդող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձ.
բաշխող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձ.
համակարգի օպերատոր՝	էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձ.
հաշվարկային կենտրոն՝	հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ.
ներկրող և (կամ) արտահանող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման և (կամ) արտահանման լիցենզիա ունեցող անձ.
էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակից (շուկայի մասնակից)՝	արտադրող, հաղորդող, բաշխող.
հաշվեկշիռ՝	Ցուցանիշների համալիր, որը բնութագրվում է էներգահամակարգում բաշխողի էլեկտրական ցանցեր առաքվող, արտադրող էլեկտրակայանների սեփական կարիքների համար և հաղորդման ցանցերում կորուստների վրա ծախսվող էլեկտրաէներգիայի մեծությունների գումարի ու էներգահամակարգում արտադրված էլեկտրաէներգիայի մեծությունների գումարի հավասարությամբ՝ հաշվի առնելով այլ

էներգահամակարգերի հետ էլեկտրաէներգիայի փոխհոսքերը.

հաշվարկային տարի՝ օրացուցային տարի:

I. Ընդհանուր դրույթներ

2. Սույն կարգով կանոնակարգվում է էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկների հիմքում դրվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի էլեկտրական ցանցեր (այսուհետ՝ բաշխողի ցանցեր) առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման գործընթացը:

3. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռի կազմման հիմնական նպատակներն են.

- սպառողներին հուսալի, անխափան և տեխնիկական կանոնակարգերով սահմանված որակի էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարումը,
- նվազագույն ծախսումներով ներքին պահանջարկի բավարարումը՝ համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշների ապահովման պայմանով,
- էլեկտրաէներգիայի ներկրման և (կամ) արտահանման պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարումը:

4. Սույն կարգում նշված տեղեկատվությունը շուկայի մասնակիցները և համակարգի օպերատորը միմյանց ներկայացնում են գրավոր: Շուկայի մասնակիցները՝ սույն կարգի պահանջների համաձայն, պատասխանատու են համակարգի օպերատորին տրամադրված տեղեկատվության հավաստիության համար:

II. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռի կազմում

5. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշիռը՝ էլեկտրաէներգիայի արտադրության, այլ էներգահամակարգեր ներկրման և (կամ) արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող մեծությունների որոշմամբ, կազմվում է համակարգի օպերատորի կողմից:

6. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռի կազմման հիմք են հանդիսանում շուկայի մասնակիցների, հաշվարկային կենտրոնի և ներկրողի և (կամ) արտահանողի կողմից մշակված առաջարկությունները:

7. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռի կազմման ժամանակ հաշվի են առնվում.

- բաշխողի ցանց էլեկտրաէներգիայի (հզորության) առաքման կանխատեսվող մեծությունները,
- հարևան երկրների հետ էլեկտրաէներգիայի (հզորության) ներկրման և (կամ) արտահանման կանխատեսվող մեծությունները,
- արտադրողների կողմից՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և բաշխողի ցանց առաքման կանխատեսվող մեծությունները,

- էլեկտրաէներգետիկական համակարգին նոր միացվող արտադրող հզորությունների էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրանքի կանխատեսվող մեծությունները,
- արտադրողների էլեկտրակայանների սեփական կարիքների համար և հաղորդողի ցանցերում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների վրա ծախսվող էլեկտրաէներգիայի (հզորության) կանխատեսվող մեծությունները,
- համակարգի օպերատորի հետ համաձայնեցված՝ հաշվարկային տարվա համապատասխան ամսվա համար արտադրող սարքավորումների հզորության սահմանափակումները,
- համակարգի օպերատորի հետ համաձայնեցված՝ հիմնական էներգետիկական սարքավորումների վերանորոգման տարեկան ժամանակացույցը:

8. Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռում ներառվող էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրությունը որոշվում է հաշվի առնելով արտադրողների էլեկտրակայանների գործող սակագների մեծությունները, էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությանը և անվտանգությանը ներկայացվող պահանջները, հաղորդման ցանցերի թողունակությունը:

Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռում հիդրոէլեկտրակայաններում (ՀԷԿ) էլեկտրական էներգիայի արտադրությունը որոշվում է հաշվի առնելով ՀԷԿ-երի կողմից ներկայացված առաջարկությունները: Գետի ելքի սեզոնային կարգավորման ջրամբարներով ՀԷԿ-երի էլեկտրական էներգիայի արտադրության մեծությունները որոշվում են հաշվի առնելով բազմամյա արտադրության միջին մեծությունը: Գետի ելքի բազմամյա կարգավորման ջրամբարներով ՀԷԿ-երի էլեկտրական էներգիայի արտադրության մեծությունները որոշվում են ըստ էլեկտրական էներգիայի արտադրման երաշխավորված մեծության՝ հաշվի առնելով հաշվարկային տարվա մեկնարկի ժամանակ կանխատեսվող հիդրոլոգիական իրավիճակը և ջրամբարներում ջրային պաշարների պահուստը:

Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռում ներառվող ատոմային էլեկտրակայանում (ԱԷԿ) էլեկտրական էներգիայի արտադրությունը որոշվում է հաշվի առնելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջարկությունները:

Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշռում ներառվող ջերմային էլեկտրակայաններում (ՋԷԿ) էլեկտրական էներգիայի արտադրությունը որոշվում է հաշվի առնելով ՋԷԿ-երի կողմից ներկայացված առաջարկությունները:

Հաշվարկային տարվա կանխատեսումային հաշվեկշիռը կազմելիս համակարգի օպերատորը պլանավորում է ներկրվող և (կամ) արտահանվող էլեկտրական էներգիայի (հզորության) մեծությունները:

9. Հաշվարկային տարվա կանխատեսվող հաշվեկշռի ձևավորման նպատակով շուկայի մասնակիցների և ներկրողի և (կամ) արտահանողի կողմից մշակվող առաջարկություններում պետք է հաշվի առնվեն նրանց տեխնիկատնտեսական ցուցանիշները:

10. Կանխատեսումային հաշվեկշիռ մշակելու նպատակով.

10.1. Բաշխողը պարտավոր է յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, ինչպես նաև համակարգի օպերատորի գրավոր պահանջով, համակարգի օպերատորին ներկայացնել հաշվարկային տարվա համար սպառողների պահանջարկը բավարարելու նպատակով բաշխողի ցանցեր էլեկտրաէներգիայի (հզորության) առաքման կանխատեսվող մեծությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ստորև նշված ծավալներով.

ա) բաշխողի ցանցեր ըստ ամիսների էլեկտրական էներգիայի առաքման կանխատեսվող մեծություններն, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) արտահանվող և ներկրվող էլեկտրական էներգիայի քանակությունները:

Հաշվարկային տարվա համար բաշխողի ցանցեր ըստ ամիսների էլեկտրական էներգիայի առաքման կանխատեսվող մեծությունները որոշելիս բաշխողը նախորդ տարվա համապատասխան ամիսներին բաշխողի ցանցեր առաքված էլեկտրաէներգիայի փաստացի մեծության նկատմամբ կիրառում է նախորդ չորս տարիների նույն ամիսներին բաշխողի ցանցեր առաքված էլեկտրաէներգիայի փաստացի մեծության միջին աճի (նվազման) տոկոսը:

Բաշխողի ցանցեր էլեկտրական էներգիայի առաքման կանխատեսվող մեծությունները որոշելիս բաշխողը որպես ուղենիշային (ճշտող) գործոններ հաշվի է առնում նախորդ չորս տարիների ընթացքում ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոփոխման միտումներն ու հաշվարկային տարվա համար կանխատեսումները, ինչպես նաև բնակլիմայական պայմանների փոփոխման բազմամյա միտումները: Այդ նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը տրամադրում է բաշխողին հետևյալ տեղեկատվությունը՝

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված՝ ՀՆԱ-ի աճի կանխատեսվող մեծությունները,
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված՝ նախորդ չորս տարվա համար էլեկտրական էներգիայի սպառման վրա ՀՆԱ-ի փոփոխության փաստացի ազդեցության վերլուծությունը,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված՝ արդյունաբերության աճի կանխատեսվող մեծությունները:

բ) բաշխողի ցանց էլեկտրաէներգիայի առաքման կանխատեսվող բեռի գրաֆիկները՝ յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա մեկ աշխատանքային և մեկ հանգստյան օրվա համար:

10.2. Հաշվարկային կենտրոնը պարտավոր է յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, ինչպես նաև համակարգի օպերատորի գրավոր պահանջով, համակարգի օպերատորին ներկայացնել հաշվարկային տարվա համար.

ա) հաղորդման համակարգում էլեկտրաէներգիայի կորուստների կանխատեսվող մեծությունները ըստ ամիսների, որոնք որոշվում են ելնելով նախորդ չորս տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստների փոփոխման միտումներից,

բ) մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ փոքր կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրման և առաքման կանխատեսվող մեծություններն ըստ ամիսների: Այդ մեծությունները որոշվում են.

- շահագործման մեջ գտնվող կայանների համար՝ որպես հաշվարկային տարվան նախորդող մինչև չորս տարիների ընթացքում այդ կայաններից (բացառությամբ տվյալ տարվա ընթացքում շահագործման հանձնված և հաշվարկային տարում շահագործման հանձնվող նոր կայանների) փաստացի առաքված էլեկտրական էներգիայի միջին մեծություն,
- տվյալ տարվա ընթացքում շահագործման հանձնված և հաշվարկային տարում շահագործման հանձնվող նոր փոքր կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրման և էլեկտրական ցանց առաքման կանխատեսվող մեծությունը որոշվում է հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա:

10.3. 30 ՄՎտ-ից մեծ հզորություն ունեցող արտադրողները (բացառությամբ տվյալ տարվա ընթացքում շահագործման հանձնված և հաշվարկային տարում շահագործման հանձնվող նոր կայանները) պարտավոր են յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, ինչպես նաև համակարգի օպերատորի գրավոր պահանջով, համակարգի օպերատորին ներկայացնել հաշվարկային տարվա համար հետևյալ տվյալներն ըստ ամիսների.

ա) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրման և կայաններից առաքման կանխատեսվող մեծությունները՝ կայանային (բլոկային) բացվածքով,

բ) կայանների սեփական կարիքների համար ծախսվող էլեկտրաէներգիայի կանխատեսվող մեծությունները,

գ) ՀԷԿ-երը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ համաձայնեցված, հաշվարկային տարում ոռոգման ռեժիմների կանխատեսումները,

դ) ՀԷԿ-երը՝ գետերի բնական հոսքի հաշվարկային տարվա կանխատեսումները՝ հաշվի առնելով հիդրոլոգիական իրավիճակի փոփոխման բազմամյա միտումները և հիդրոօդերևութաբանության ծառայության կանխատեսումները:

30 ՄՎտ-ից մեծ հզորություն ունեցող արտադրողները (բացառությամբ տվյալ տարվա ընթացքում շահագործման հանձնված և հաշվարկային տարում շահագործման հանձնվող նոր կայանները) պարտավոր են յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 15-ը, համակարգի օպերատորին ներկայացնել հաշվարկային տարվա համար հետևյալ տվյալներն ըստ ամիսների.

ա) պայմանագրային և տնօրինելի հզորությունը, գործարկվող նվազագույն հզորությունը, ինչպես նաև հզորության զարգացման և նվազեցման արագությունները,

բ) բնակլիմայական պայմաններով և ջերմային բեռնվածքով պայմանավորված հզորությունների սահմանափակումները:

Տվյալ տարվա ընթացքում շահագործման հանձնված և հաշվարկային տարում շահագործման հանձնվող նոր էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և էլեկտրական ցանց առաքման կանխատեսվող մեծությունը որոշվում է հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա:

10.4. Ներկրողը և (կամ) արտահանողը պարտավոր է յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, ինչպես նաև համակարգի օպերատորի գրավոր պահանջով, Համակարգի օպերատորին ներկայացնել հաշվարկային տարվա համար հետևյալ տեղեկատվությունը.

ա) էլեկտրաէներգիայի ներկրման և (կամ) արտահանման կանխատեսվող մեծություններն ըստ ամիսների,

բ) էլեկտրաէներգիայի ներկրման և (կամ) արտահանման կանխատեսվող գրաֆիկները՝ յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա մեկ աշխատանքային և մեկ հանգստյան օրվա համար:

10.5. Շուկայի մասնակիցները պարտավոր են յուրաքանչյուր տարի, մինչև հոկտեմբերի 1-ը, ինչպես նաև համակարգի օպերատորի գրավոր պահանջով, վերջինիս ներկայացնել համակարգի օպերատորի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող իրենց սեփականությունը հանդիսացող սարքավորումների՝ այդ թվում նաև ՌՊևԱ սարքվածքների պլանային նորոգման կամ շահագործումից դուրս բերման ժամանակացույցները:

11. Այն դեպքերում, երբ 10.5 կետում նշված սարքավորումների նորոգման ժամկետները համընկնում են, համակարգի օպերատորին իրավունք է վերապահվում ներկայացնել այդ սարքավորումների, ինչպես նաև հիդրոկայանների ջրային կառույցների նորոգումների ժամանակացույցում համապատասխան փոփոխություններ կատարելու պահանջ՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման նպատակով:

12. Համակարգի օպերատորը հաշվարկային տարվա համար որոշում է նաև անհրաժեշտ պահուստային հզորությունների մեծություններն ըստ ամիսների:

13. Հաշվարկային տարվա համար կանխատեսվող հաշվեկշիռը կազմելու և պահուստային հզորությունների մեծությունները որոշելու ժամանակ համակարգի օպերատորն առաջնորդվում է նվազագույն ծախսերով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրման սկզբունքով՝ հաշվի առնելով հաղորդման ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների նվազագույն մակարդակների և էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշների ապահովման պայմանները:

14. Հաշվարկային տարվա հաշվեկշռի կազմման համար վերը նշված անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալուց և վերլուծելուց հետո համակարգի օպերատորը կազմում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ակտիվ հզորության օրական հաշվեկշիռները (հավելված №1)՝ յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա մեկ աշխատանքային և մեկ հանգստյան օրվա համար:

15. ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ակտիվ հզորության օրական հաշվեկշիռների (հավելված №1) հիման վրա համակարգի օպերատորը կազմում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հզորության և էլեկտրական էներգիայի արտադրության, ներկրման, արտահանման կանխատեսվող հաշվեկշիռը (հավելված №2): Հաշվեկշիռը կազմելիս համակարգի օպերատորը հաշվի է առնում էլեկտրակայանների սեփական կարիքների և հաղորդողի էլեկտրական ցանցերում

հանձնաժողովի կողմից սահմանված էլեկտրական էներգիայի կորուստների մեծությունները, արտահանման և ներկրման առևտրային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, արտադրողի և հաղորդողի հիմնական սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցը և այլ տվյալներ:

16. Վերը նշված տվյալների հիման վրա հաշվարկային տարվա համար համակարգի օպերատորը կազմում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման էլեկտրական էներգիայի կանխատեսվող հաշվեկշիռը (հավելված №3):

17. Այն ամիսներին, երբ նախատեսված է 30 ՄՎտ-ից մեծ հզորություն ունեցող արտադրողների արտադրական հզորությունների նորոգում, ամսական հաշվեկշիռը բաժանվում է մասերի:

18. Հաշվարկային տարվա համար կազմված հաշվեկշիռները և սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցները համակարգի օպերատորը պետք է համաձայնեցնի շուկայի համապատասխան մասնակիցների հետ, բացառությամբ՝ մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ կայաններ ունեցող արտադրողների:

19. Համակարգի օպերատորը պարտավոր է յուրաքանչյուր տարի, մինչև նոյեմբերի 1-ը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համաձայնեցնել և հանձնաժողովին, շուկայի մասնակիցներին ու ներկրողին և (կամ) արտահանողին ներկայացնել սույն կարգով սահմանված № 3 հավելվածը, ինչպես նաև սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցերը ըստ ամիսների:

20. Յուրաքանչյուր տարի, մինչև նոյեմբերի 15-ը, շուկայի մասնակիցները և ներկրողը և (կամ) արտահանողը կարող են ներկայացնել հանձնաժողովին իրենց առաջարկությունները՝ ուղղված հաշվարկային տարվա համար կազմված էլեկտրական էներգիայի կանխատեսումային հաշվեկշռի ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցերի հստակեցմանը: Սույն կետով նախատեսված առաջարկությունները ներկայացվում են հանձնաժողովին գրավոր:

III. Հաշվարկային տարվա էլեկտրական էներգիայի կանխատեսումային հաշվեկշռի վերաբերյալ իրազեկման կազմակերպում

21. Համակարգի օպերատորը յուրաքանչյուր տարի, մինչև դեկտեմբերի 1-ը, հանձնաժողովից ստանում է հավանություն հաշվարկային տարվա էլեկտրական էներգիայի կանխատեսումային հաշվեկշռի ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցների վերաբերյալ:

22. Հավանության արժանացած հաշվարկային տարվա էլեկտրական էներգիայի կանխատեսումային հաշվեկշռի ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցների պատճենները համակարգի օպերատորը յուրաքանչյուր տարի, մինչև դեկտեմբերի 10-ը, ուղարկում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, շուկայի մասնակիցներին և ներկրողին և (կամ) արտահանողին:

IV. Հաշվարկային տարվա էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսումային հաշվեկշռում փոփոխությունների կատարում

23. Եթե հաշվարկային տարվա առաջին չորս ամիսների փաստացի արդյունքներով բացահայտվել է, որ էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության կանխատեսումային կառուցվածքի փոփոխման հետևանքով բաշխողի մեծածախ գնման միջին սակագինը շեղվել է հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից 5% և ավել, Համակարգի օպերատորն առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողով՝ էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսումային հաշվեկշռի ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցների հստակեցման վերաբերյալ:

24. Հստակեցումների հետ կապված առաջարկությունները՝ համաձայնեցված շուկայի մասնակիցների, ներկրողի և (կամ) արտահանողի ու ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ, ներկայացվում են հանձնաժողով յուրաքանչյուր տարի, մինչև մայիսի 20-ը:

25. Յուրաքանչյուր տարի, մինչև մայիսի 31-ը, շուկայի մասնակիցները և ներկրողը և (կամ) արտահանողը կարող են հանձնաժողով ներկայացնել իրենց առաջարկությունները՝ կապված կանխատեսումային հաշվեկշռում ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցներում հստակեցման հետ:

26. Համակարգի օպերատորը յուրաքանչյուր տարի, մինչև հունիսի 5-ը, հանձնաժողովից ստանում է հավանություն կանխատեսումային հաշվեկշռում ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցում առաջարկվող հստակեցումները կատարելու համար:

27. Հավանության արժանացած հստակեցված կանխատեսումային հաշվեկշռի ու սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցների պատճենները համակարգի օպերատորն ուղարկում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, շուկայի մասնակիցներին և ներկրողին և (կամ) արտահանողին յուրաքանչյուր տարի, մինչև հունիսի 10-ը:

V. Համակարգի ռեժիմների ընթացիկ պլանավորումը

28. Համակարգի օպերատորը պարտավոր է շուկայի մասնակիցներին ներկայացնել՝

1) տարեկան պլանով նախատեսված ամսական ռեժիմների փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ մինչև նախորդ ամսվա 25-ը,
2) տարեկան նորոգումների գրաֆիկի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ մինչև նախորդ ամսվա 25-ը,
3) հաջորդ օրվա էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվեկշիռը՝ մինչև նախորդ օրվա ժամը 16:00-ն:

29. 30 ՄՎտ-ից մեծ հզորություն ունեցող հիդրոէլեկտրակայանները պարտավոր են համակարգի օպերատորին ներկայացնել՝

1) ոռոգման ջրի տասնօրյակային պահանջարկի քանակությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ յուրաքանչյուր տասնօրյակի առաջին օրվանից երկու օր առաջ,
2) ոռոգման ջրի օրական ռեժիմների պլանի փոփոխության դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվություն՝ փոփոխության օրվանից երկու օր առաջ:

Հավելված N 1

էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման կարգի

ՀՀ ԷԼԷԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Մվտ

	Ժամեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	ԱՐՏԱՂ.
1	ՍԵՎԱՆ ՀԷԿ																									
2	ՀՐԱԶԴԱՆ ՀԷԿ																									
3	ԱՐԳԵԼ ՀԷԿ																									
4	ԱՐԶՆԻ ՀԷԿ																									
5	ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ																									
6	ԵՐԵՎԱՆ ՀԷԿ - 1																									
7	ԵՐԵՎԱՆ ՀԷԿ - 3																									
8	ՍԵՎԱՆ-ՀՐ.ԿԱՍԿԱԴ																									
9	ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԷԿ																									
10	ՇԱՄԲ ՀԷԿ																									
11	ՏԱԹԵՎ ՀԷԿ																									
12	ՈՐՈՏԱՆԻ ՀԷԿՀ																									
13	ՓՈՔՐ ՀԷԿ - ԵՐ																									
14	ՐՈԴ. ՀԷԿ - ԵՐ																									
15	ՀՐԱԶԴԱՆ ՋԷԿ																									
16	ՀՐԱԶԴԱՆ-5 Է.Բլոկ																									
17	ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ																									
18	ՎԱՆԱՁՈՐ ՋԷԿ																									
19	ՐՈԴ. ՋԷԿ - ԵՐ																									
20	ՀԱԷԿ																									
21	ԿԱՅԱՆ. Գումար																									
22	ԵԻՆՈՒՀԱՅՐ-110																									
23	ԹԱՐԹԱՌ ՀԷԿ																									
24	ԼՂՀ սպառում																									
25	ՆԻՆՈՇՄԻՆԴԱ -110																									
26	ԼԱԼՎԱՐ- 110																									
27	ԱԼԱՎԵՐԴԻ-220																									
28	ՄԵՂՐԻ -220																									
29	ՄԵՂՐԻ -220 արտ.																									
30	ՄԵՂՐԻ -220 ներ.																									
31	ՄԵՂՐԻ -220 Է.Փ.																									
32	ՀԱՇՎԵՄՆԱՑՈՐԴ																									
33	ՍՊԱՌՈՒՄ																									
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	

Հավելված N 2

էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման կարգի

ՀՀ ԷԼԷԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐԿՐՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇԻՈԸ

մլն.կՎտժ, ՄՎտ

ամիսներ			1	2	3	4	5		6	7	8	9	10	11		12	Տարի
օրեր			31	28	31	30	1-13	14-31	30	31	31	30	31	1-5	6-30	31	
ՀԱԷԿ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Հր.ՋԷԿ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Հրազդան-5	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Եր.ՋԷԿ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
ՄԷԿ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Որոտանի ՀԷԿ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Փոքր ՀԷԿ-եր	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Ընդամենը կայաններ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Կայանների ս.կ.	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Կորուստ ԲԷՑ-ում	էլ.էներգիա																
Արտահանում (Իրան, Վրաստան)	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
Ներկրում (Իրան, Վրաստան)	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
ՀԷՑ այդ թվում՝ Արցախ	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															
	էլ.էներգիա																
	հզոր.	առավ.															
		նվազ.															

Հավելված N 3

էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման կարգի

ՀՀ ԷԼԷԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐԿՐՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ՑԱՆՑԵՐ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ

մլն.կՎտ.ժ

		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Տարի
1	Արտադրանքը կայաններում՝ այդ թվում													
1,1	ՀԱԷԿ													
	ՀԱԷԿ - Առաքում													
1,2	ՀՐԱԶԴԱՆ ՋԷԿ													
	ՀՐԱԶԴԱՆ ՋԷԿ - առաքում													
1,3	ՀՐԱԶԴԱՆ- 5 էն.բլոկ													
	ՀՐԱԶԴԱՆ- 5 էն.բլոկ - առաքում													
1,4	ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ ՀՇԳՋԷ													
	ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ ՀՇԳՋԷ - առաքում													
1,5	ՈՐՈՏԱՆ ՀԷԿՀ													
	ՈՐՈՏԱՆ ՀԷԿՀ - առաքում													
1,6	ՄԷԿ													
	ՄԷԿ - առաքում													
1,7	ՉՈՐԱ ՀԷԿ													
	ՉՈՐԱ ՀԷԿ - առաքում													
1,8	Փոքր կայաններ													
	Փոքր կայաններ - առաքում													
2	Առաքում կայաններից													
3	Ներկրում													
3,1	Վրաստանից													
3,2	ԻԻՀ-ից													
4	Արտահանում													
4,1	ԻԻՀ													
4.1.1	Երևանի ՋԷԿ -ից													
4.1.2	Հրազդան-5 էն.բլոկից													
4,2	Վրաստան													
5	Կորուստ ԲԷՑ- ում													
5,1	Վրաստանից ներկրված էլ.էն. մասով													
5,2	Հրազդան-5 էն.բլոկի արտահանումից													
5,3	Երևանի ՋԷԿ-ի արտահանումից													
6	ՀԷՑ գնած էլ.էներգիա													
6,1	ՀԱԷԿ-ից													
6,2	Հրազդան ՋԷԿ-ից													
6,3	Հրազդանի-5 էն.բլոկից													
6,4	Երևանի ՋԷԿ ՀՇԳՋԷ-ից													
6,5	Եր.ՋԷԿ ՀՇԳՋԷ (ԻԻՀ-ից ներկրում)													
6,6	Որոտանի ՀԷԿՀ-ից													
6,7	ՄԷԿ-ից													
6,8	ՉՈՐԱ ՀԷԿ-ից													
6,9	Փոքր կայաններից													
7	ԼՈՀ													
8	Երևանի ՋԷԿ-ի «ՀԷՑ» ՓԲԸ-ից գնած էլ.էներգիա													
9	«ՀԷՑ» ՓԲԸ վերագրված կորուստ													
10	«ՀԷՑ» ՓԲԸ մուտք													